ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-ԻՆ ՀԱՆՈՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՎԻԵՏՆԱՄԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԻ ԿՈՂՄԻՑ, ԵՎ ՎԻԵՏՆԱՄԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ ՄՅՈՒՍ ԿՈՂՄԻՑ, ՄԻՋԵՎ ԱԶԱՏ ԱՌԵՎՏՐԻ ՄԱՍԻՆ» 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 29-Ի ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ 5.7 ՀՈԴՎԱԾԻ ՀԱՄԱՁԱՅՆ՝ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 17 հունվարի 2023 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Ա. Մուրադյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2022 թվականի մարտի 31-ին Հանոյում ստորագրված «2018 թվականի հունիսի 28-ին ստորագրված՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության կենտրոնական մաքսային մարմինների միջև «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրի 5.7 հոդվածի համաձայն՝ տեղեկությունների փոխանակման իրագործման մասին» արձանագրության մեջ փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2022 թվականի նոյեմբերի 3 N 1687-Ա որոշմամբ հավանություն է տվել 2022 թվականի մարտի 31-ին Հանոյում ստորագրված «2018 թվականի հունիսի 28-ին ստորագրված՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության կենտրոնական մաքսային մարմինների միջև «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրի 5.7 հոդվածի համաձայն՝ տեղեկությունների փոխանակման իրագործման մասին» արձանագրության մեջ փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ արձանագրությունում (այսուհետ՝ Արձանագրություն) ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2022 թվականի նոյեմբերի 11-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ արձանագրությունը, սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Արձանագրությունն ստորագրվել է 2022 թվականի մարտի 31-ին Հանոյում՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի, Բելառուսի Հանրապետության պետական մաքսային կոմիտեի, Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության, Ղրղզական Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական ծառայության, Ռուսաստանի Դաշնության դաշնային մաքսային ծառայության և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության ֆինանսների նախարարության միջև:

Արձանագրության ստորագրմանը նախորդել է «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ին համաձայնագրի (ՍԴՈ-1277՝ ընդունված 2016 թվականի հունիսի 3-ին, ՀՀ կողմից վավերացվել է 2016 թվականի հունիսի 17-ին Ազգային ժողովի ԱԺՈ-223-Ն որոշմամբ) և «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության կենտրոնական մաքսային մարմինների միջև «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրի 5.7-րդ հոդվածի համաձայն տեղեկությունների փոխանակման իրագործման մասին» 2018 թվականի հունիսի 28-ին արձանագրության (ՍԴՈ-1484՝ ընդունված 2019 թվականի հոկտեմբերի 22-ին, ՀՀ կողմից վավերացվել է 2019 թվականի դեկտեմբերի 20-ին ՀՕ-291-Ն օրենքով) ստորագրումը: Այս արձանագրությունն ունի անբաժանելի մաս կազմող երեք Հավելված:

Վերը նշված համաձայնագրի 5.7-րդ հոդվածը նախատեսում է ԵԱՏՄ անդամ պետությունների մաքսային մարմինների և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության միջև էլեկտրոնային տեղեկատվության կանոնավոր կերպով փոխանակում,

իսկ վերը նշված արձանագրության նորմերը նախատեսում են էլեկտրոնային տեղեկատվության փոխանակման փուլային ներդրում՝ ինտեգրացիոն տեղեկատվական համակարգի միջոցով: Սկզբնական շրջանում այն վերաբերվել է կոնկրետ ապրանքներին, որից հետո տեղեկատվության փոխանակման իրագործումը նախատեսվում է տարածել բոլոր ապրանքների վրա:

Արձանագրությունը մշակվել է տեղեկատվության փոխանակման երկրորդ փուլի իրականացման նախապատրաստման նպատակով և ներառում է այն ապրանքների ցանկը, որոնց մասին տեղեկատվության փոխանակումը նախատեսվում է իրականացնել էլեկտրոնային հաղորդակցության երկրորդ փուլի շրջանակներում:

Արձանագրությամբ նախատեսվում է փոփոխություններ կատարել 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրի արձանագրության 3-րդ հոդվածի 5-րդ կետի երրորդ պարբերությունում, Հավելված 1-ի Առդիր Ա-ի Աղյուսակ 2-ի յոթերորդ տողում, 74-րդ տողում և 82-րդ պարբերությունում, 2-րդ Հավելվածում, ինչպես նաև ավելացվում է նոր 4-րդ Հավելվածով:

2. Արձանագրության 2-րդ հոդվածով սահմանվում է, որ Արձանագրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը: Հայաստանի Հանրապետության կողմից Արձանագրությունը ստորագրվել է վերապահումով, որի համաձայն՝ այն ուժի մեջ կմտնի Հայաստանի Հանրապետության կողմից ուժի մեջ մտնելու համար համապատասխան ներպետական ընթացակարգերն անցնելու մասին Եվրասիական տնտեսական հանձնաժողովին և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետությանը ծանուցելու ամսաթվից:

3. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

3.1. 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրի արձանագրության Հավելված 1-ի Առդիր Ա-ի Աղյուսակ 2-ի 7-րդ և 82-րդ տողերում սահմանված փոխանակման ենթակա տեղեկությունների տրամադրման նախկին կամընտրական կարգի փոխարեն կիրառել պարտադիր կարգը (հոդված 1, կետ 2),

3.2. 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրի արձանագրության Հավելված 1-ի Առդիր Ա-ի Աղյուսակ 2-ի 74-րդ տողում սահմանված փոխանակման ենթակա տեղեկությունների տրամադրման նախկին պարտադիր կարգի փոխարեն կիրառել կամընտրական կարգը (հոդված 1, կետ 2),

3.3. 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրի սահմանած կարգով փոխանակման ենթակա տեղեկությունները տրամադրել այդ համաձայնագրի Հավելված 2-ի նոր խմբագրությամբ սահմանված ցանկին համապատասխան (հոդված 1, կետ 3),

3.4. Վիետնամի Սոցիալիստական Հանրապետությանը փոխանցել 4-րդ Հավելվածի 2-րդ պարբերությամբ սահմանված ապրանքային միավորների վերաբերյալ տեղեկություններ (հոդված 1, կետ 4):

4. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված նպատակին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2022 թվականի մարտի 31-ին Հանոյում ստորագրված «2018 թվականի հունիսի 28-ին ստորագրված՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության կենտրոնական մաքսային մարմինների միջև «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրի 5.7 հոդվածի համաձայն՝ տեղեկությունների փոխանակման իրագործման մասին» արձանագրության մեջ փոփոխություններ կատարելու մասին» արձանա-

գրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

17 հունվարի 2023 թվականի
ՍԴՈ-1677